ՀՀ Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանի շնորհավորական ուղերձը բանակի օրվա առթիվ

28.01.2024

Սիրելի՛ հայրենակիցներ, զինված ուժերի հարգելի՛ ներկայացուցիչներ, Բոլորիս շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման 32-րդ տարեդարձի կապակցությամբ:

Հայոց բանակը մեր պետականության պահպանման, մեր ինքնիշխանության, մեր վաղվա տնտեսական հզորության առհավատչյան է, ստեղծագործ հայ ժողովրդի խաղաղ առօրյայի ու մեր մշակութային եզակիության երաշխավորն է:

Հայոց բանակի 32-ամյա հոբելյանի առթիվ սրտանց շնորհավորում եմ մեր քաջարի զինվորներին, հրամանատարներին, բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել հայկական բանակի կազմավորման, նրա կայացման ու հզորացման գործում:

Առանձնահատուկ երախտագիտությունս եմ հայտնում առաջնագծում կանգնած մեր բոլոր զինվորներին, մեր թիկունքն անառիկ պահող հերոսներին:

Մեր զինվորներին մաղթում եմ բարի ծառայություն, նրանց ծնողներին՝ համբերություն, հանրապետության սահմաններին՝ անառիկ ամրություն ու խաղաղություն:

Խոնարհումով ենք հիշում ազատամարտիկներին, զինվորներին ու սպաներին, որոնք իրենց կյանքը չխնայեցին հայրենիքի պաշտպանության խրամատում: Փա՛ռք Հայաստանի Հանրապետության զինված ուժերին և կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը: